*Տեխնիկական առաջադրանք*

***Ներածություն***

Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամը (ՀԿՍ) իր արտադպրոցական կրթության ծրագրերի շրջանակներում աջակցում է Հայաստանի տարբեր մարզերում գործող սոցիալ-կրթական կենտրոններին, որոնք արտադպրոցական կրթական խմբակների միջոցով երեխաների և երիտասարդների համար ապահովում են կրթական, սոցիալական և զարգացման հնարավորություններ:

Ավագ դպրոցի աշակերտների անձնային, ակադեմիական և սոցիալական զարգացումն ամրապնդելու նպատակով ՀԿՍ-ը նախատեսում է իր աջակցությամբ գործող սոցիալ-կրթական կենտրոններում ներդնել բանավեճի արվեստի և հաղորդակցման հմտությունների զարգացմանն ուղղված կրթական ծրագիր:

Այդ նպատակով հրավիրում ենք որակավորված անհատ խորհրդատուների կամ խորհրդատվական կազմակերպությունների՝ ՀԿՍ-ի աջակցությամբ գործող սոցիալ-կրթական կենտրոնների ընտրված աշխատակիցների համար հնգօրյա վերապատրաստողների վերապատրաստման (ToT) ծրագիր մշակելու և իրականացնելու համար:

Ծրագիրը մասնակիցներին կապահովի անհրաժեշտ գիտելիքներով, գործնական հմտություններով և մեթոդական գործիքներով՝ ավագ դպրոցի աշակերտների համար բանավեճի արվեստի և հաղորդակցման հմտությունների զարգացման դասընթացներն ինքնուրույն կազմակերպելու և վարելու նպատակով:

Առաջադրանքի իրականացման հիմքում կլինեն գործնական, մասնակցային և կայունության ապահովման մոտեցումները՝ երաշխավորելով, որ վերապատրաստման արդյունքում կմշակվի արտադպրոցական կրթական ծրագիր, որը հնարավոր կլինի ներառել վերոնշյալ կենտրոնների կանոնավոր գործունեության մեջ:

Մանրամասներին կարող եք ծանոթանալ կից ֆայլում:

**Աշխատանքի շրջանակը**

Ընտրված խորհրդատուն կամ կազմակերպությունը պատասխանատու կլինի հետևյալ առաջադրանքների իրականացման համար.

**Առաջադրանք 1. Վերապատրաստողների վերապատրաստման դասընթացի իրականացում**

Մասնագետը պետք է մշակի 14–18 տարեկան ավագ դպրոցի աշակերտների համար նախատեսված *բանավեճի արվեստի և հաղորդակցման հմտությունների* ամբողջական ուսումնական արտադպրոցական ծրագիր՝ բաղկացած առնվազն 10 կամ ավելի դասերից:

Ուսումնական փաթեթը պետք է ներառի առնվազն՝

- յուրաքանչյուր դասի նպատակները, թեմաները և առաջարկվող տևողությունը,
- մանրամասն դասապլաններ,
- գործնական և ինտերակտիվ վարժություններ,

- դերային խաղեր և իրավիճակների նմանակումներ,
- դեպքերի ուսումնասիրություններ,
- դասընթացի ընթացքում կիրառվող մեթոդներ և գործիքներ,
- աշակերտների ուսումնառության և մասնակցության գնահատման մեթոդներ,
- անհրաժեշտ գնահատման և հետադարձ կապի ձևաթղթեր:

Մշակված ուսումնական փաթեթը պետք է լինի պատրաստ հետագա կիրառման համար ՀԿՍ-ի աջակցությամբ գործող սոցիալ-կրթական կենտրոններում և հիմք հանդիսանա ToT դասընթացի իրականացման համար:

**Առաջադրանք 2. Վերապատրաստողների վերապատրաստման դասընթացի իրականացում**

Մշակված ուսումնական փաթեթի հիման վրա իրականացնել ՀԿՍ-ի աջակցությամբ գործող սոցիալ-կրթական կենտրոնների ընտրված դասընթացավարների համար նախատեսված առնվազն **հնգօրյա ToT դասընթաց**, որի մեկնարկը նախատեսվում է 2027թ. հունվարից:

Դասընթացը պետք է համատեղի տեսական նյութը, գործնական վարժությունները և մասնակիցների կողմից մշակված ուսումնական նյութերը ինքնուրույն կիրառելու և դասընթաց վարելու հնարավորությունները:

Խորհրդատուն պետք է ապահովի, որ մասնակիցները՝

- տիրապետեն մշակված ուսումնական ծրագրին և դրա մեթոդաբանությանը,
- գործնականորեն կիրառեն հաղորդակցման տեխնիկաները,
- սովորեն վարել քննարկումներ և կազմակերպել խմբային աշխատանքներ դեռահասների հետ,
- փորձարկեն ուսումնական ծրագրի դասերն ու վարժությունները,
- անցկացնեն կարճ փորձնական դասեր և ստանան կառուցվածքային հետադարձ կապ,
- կարողանան հետագայում ինքնուրույն իրականացնել դասընթացը:

**Առաջադրանք 3**. Ուսումնական փաթեթի վերջնականացում

ToT դասընթացի ընթացքում ստացված հարցերի, մասնակիցների փորձի և հետադարձ կապի հիման վրա մասնագետը, անհրաժեշտության դեպքում, պետք է լրամշակի և վերջնականացնի ուսումնական փաթեթը:

Վերջնական փաթեթը պետք է ներառի դասապլանները, ներկայացումները, աշխատանքային թերթիկները, վարժությունները, դերային խաղերի սցենարները, դեպքերի ուսումնասիրությունները, գնահատման և հետադարձ կապի գործիքները կամ այլ նյութեր՝ որպես դասընթացավարի ուղեցույց:

Բոլոր նյութերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով և  լինեն հեղինակային իրավունքից ազատ (open-source) կամ մշակված հատուկ ՀԿՍ-ի համար: Մասնագետը պետք է երաշխավորի, որ ներկայացվող նյութերի օգտագործումը չի խախտում երրորդ անձանց հեղինակային իրավունքները:

4. Ակնկալվող արդյունքներն ու հանձնման ենթակա նյութերը

| Հ/Հ | Արդյունք / հանձնման ենթակա նյութ | Նկարագրություն |
|---|---|---|
| 1 | Մեկնարկային հաշվետվություն և աշխատանքային պլան | Առաջարկվող մեթոդաբանություն, աշխատանքի փուլեր, ժամանակացույց և ուսումնական ծրագրի մշակման մոտեցում |
| 2 | Ուսումնական ծրագիր | 14–18 տարեկան աշակերտների համար նախատեսված առնվազն 10 և ավելի դասերից բաղկացած ծրագիր |
| 3 | Հնգօրյա ToT դասընթաց | դասընթացավարիների վերապատրաստման իրականացում |
| 4 | Վերապատրաստման և ուսուցման նյութեր | դասապլաններ, ներկայացումներ, աշխատանքային թերթիկներ, վարժություններ և դեպքերի ուսումնասիրություններ՝ որպես ուղեցույց |
| 5 | Գնահատման և հետադարձ կապի գործիքներ | ToT-ի մասնակիցների և աշակերտների գնահատման գործիքներ, ինչպես նաև հետադարձ կապի ձևաթղթեր |
| 6 | Վերջնական հաշվետվություն | Իրականացված գործողությունների ամփոփում, մասնակիցների գնահատման արդյունքներ, հիմնական եզրահանգումներ և հետագա իրականացման վերաբերյալ առաջարկություններ |

Բոլոր արդյունքները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ հայերենով և խմբագրման ենթակա ձևաչափերով:

Վերապատրաստման ծրագիրը և ուսումնական փաթեթը վերջնականացնելուց և կիրառելուց առաջ պետք է ներկայացվեն ՀԿՍ-ի քննարկմանն ու հաստատմանը:

ՀԿՍ-ը ներկայացված նյութերի վերաբերյալ իր դիտարկումները և հետադարձ կապը կներկայացնի դրանք ստանալուց հետո առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Դիմորդները պետք է ներկայացնեն տեխնիկական և ֆինանսական առաջարկ:

**Տեխնիկական առաջարկ.** պետք է ներառի. (1) առաջարկվող մեթոդաբանությունը, աշխատանքի իրականացման փուլերը, ժամանակացույցը և ակնկալվող արդյունքները և (2) ֆինանսական առաջարկները:

**Ֆինանսական առաջարկ**

Լրացնել ֆինանսական առաջարկի աղյուսակը

| **Հ/Հ** | **Ծախսային հոդված / Աշխատանքի նկարագրություն** | **Չափման միավոր** | **Քանակ** | **Միավորի արժեք (ՀՀ դրամ)** | **Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)** |
|---|---|---|---|---|---|
| 1 | Առնվազն 10 և ավելի դասերից բաղկացած ուսումնական ծրագրի մշակում՝ ներառյալ դասերի բովանդակությունը, մեթոդաբանությունը, գործնական վարժությունները և օժանդակ նյութերը | Ծառայություն | 1 | | |
| 2 | Դասընթացավարների վերապատրաստման (ToT) ծրագրի մշակում և իրականացում՝ մշակված ուսումնական փաթեթի հիման վրա | Ծառայություն | 1 | | |
| 3 | ToT-ի ընթացքում մշակված նյութերի փորձարկում, մասնակիցների հետ գործնական աշխատանքների իրականացում և հետադարձ կապի հավաքագրում | Ծառայություն | 1 | | |
| 4 | Փորձարկման արդյունքների հիման վրա ուսումնական ծրագրի և մեթոդական նյութերի լրամշակում | Ծառայություն | 1 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | Վերջնական ուսումնական փաթեթի պատրաստում և ՀԿՍ-ին հանձնում՝ էլեկտրոնային տարբերակով | Փաթեթ | 1 | | |
| | Ընդամենը՝ առանց հարկերի | | | | |
| | Հարկեր և պարտադիր վճարներ | | | | |
| | Ընդհանուր արժեք՝ ներառյալ հարկերը և պարտադիր վճարները | | | | |

Դիմելու կարգը

Պահանջվող տեխնիկական և ֆինանսական առաջարկների հետ մեկտեղ ներկայացնել.

-**Անհատ խորհրդատուների** դեպքում՝ ինքնակենսագրություն (CV), մասնագիտական փորձը, կրթությունը, համապատասխան որակավորումները և նախկինում իրականացրած աշխատանքները:

-**Կազմակերպությունների** դեպքում՝ համապատասխան փորձի նկարագիր՝ նշելով առաջարկվող գլխավոր վերապատրաստողին, ինքնակենսագրականը, և թիմի մյուս անդամների ինքնակենսագրականները, եթե այդպիսիք կան:

Փաթեթը ուղարկել հետևյալ հասցեով՝

- Էլեկտրոնային փոստ՝ info.roundtable.armenia@gmail.com
- Դիմումների ներկայացման վերջնաժամկետ՝ 10 դեկտեմբերի 2026 թ., ժամը 17:00,
- Էլեկտրոնային նամակի թեմա՝ Դիմում “ Բանավեճի արվեստ և հաղորդակցման հմտություններ” դասընթաց

կամ ներկայացնել առձեռն հետևյալ հասցեով՝

ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Հայաստան

Միայն նախնական ընտրությունն անցած դիմորդների հետ կապ կհաստատվի:

ՀԿՍ-ն իրեն իրավունք է վերապահում պահանջելու լրացուցիչ տեղեկություններ, բանակցելու առաջարկվող ծրագրի և բյուջեի շուրջ, ինչպես նաև ընդունելու կամ մերժելու դիմումները՝ իր գործող ընթացակարգերին համապատասխան: